



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Гайсманская усадьба

9147.925

У-50

1930_p

31 Aug 2007

2011-09

5149

ԼԵԼՎԱԾ «ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի

№ 5

Ո. ՄԵԼԻՔ-ՅԵՆՆՅԱՆՔՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

9(47.925)
Մ-50

ՅԵՐԵՎԱՆ

1980

15 ՀԱՎ. ԵԼ. ԼՍԾ «ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի № 5

Մ. ՄԵԼԻՔ-ՅԱՆՆԱՅՈՐՅԱՆ

9/4/2015
5-50

13 12 3
ՅԵՐԵՎԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿ. ԴԻԼ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1930

27 JUN 2013

12545

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ-ՏՊԱՐԱԿ
ՊԱՏՎԵՐ 2573
ԳՐԱՌԵՊԳԼԻԿԱՐ 5017 (բ)



30629
419

Ա. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 2-ին Թիֆլիսում ստանում եմ մի հեռագիր, վերով ինձ Ալեքսանդրից կանչում են:

Այնտեղից յեկած սպան հայտնում է, վոր մայիսի 1-ին բրիգադան հրաժարվել է հայա-տակվելու «գաղնացական» կառավարությանը:

Նստում եմ դնացք: Ճանապարհին ամե-նուրեք խոսում են պատահած դեպքերի մա-սին: Լսում եմ կցկտուր խոսքեր՝ «բայլչեիկ-ները զրավել են Բագուն և շարժվում են դե-պի Թիֆլիս: Ալեքսանդրապոլում հաստատ-ված է խորհրդային իշխանություն, Հայաս-տանի զորքի մեջ տիրում է ուժեղ շարժում»:

Սահմանադրում տիրում է չտեսնված կենդանություն, սև փափախավորները թափ-վում են վազոնները, ստուգում, խուզար-կում:

«Շտապեցեք ձեր գունդն ապստամբվել է» — լսում եմ համարյա թե ամեն կողմից: Սկսում է մթնել: Վազոններում խոտակցու-

թյունները դադարել էին: Գնացքն անցնում
է Ախթալա և Սանահին կիրճերի միջով ու
դղրդում. յես մտածում եմ՝ ինչ է պատահել,
ով է ապստամբվել...

Ս. զինվորական հարթ հրապարակի վրա,
զորանոցների աջու գունդը շարժվում էր:

Նայում եմ լուսամուտով: Կատարվում է
դնդի և զորամասերի նոր կառուցում:

Լսում եմ պետերի կցկտուր հրամանները:
Եսկազորոնները շարվում են ու պատրաստ-
վում պարապմունքի, բայց բոլորն էլ առանց
ուսադիրներն ու գլխանչանների:

Բոլորի դեմքերը ցույց են տալիս մի ներ-
քին ուրախություն, բոլորի աչքերն էլ փայ-
լում են վողեորությամբ. «Չենք ուզում դաշ-
նակցականներին», լսվում են ամեն կողմից,
«Կեցցե Խորհրդային իշխանությունը Հայաս-
տանում»:

Մի ժամ հետո, հեծելազորի բրիգադայի
պետի զրասնյակում հավաքվել էին զորա-
մասերի հրամանատարները: Կայազորի պետը
լուռ լսում է զեկուցում զորամասերից, վոր
զորքերը հրաժարվում են ծառայելու դաշնակ-
ցական կառավարությանը:

Կարճ լուռթյունից հետո, վերջապես կա-
յազորի պետը հարցնում է. «Ուրեմն Ալեք-
սանդրապոլում չգտնվեց մի սպա, մի խումբ

զինվորներ, վորոնք զենքը ձեռքին դուրս դա-
յին պաշտպանելու կառավարությանը»:

Պատասխանը բացասական է: Ձևականու-
թյունները կատարված են: Համհարզը սլա-
նում է գեպի զրահագնացքը:

Կայազորը հրամկազմի հետ առանց գըն-
դակ արձակելու անցնում է ապստամբների
կողմը...

Կայարանի հեռախոսիչը կռացավ հեռա-
դրական ապարատի վրա, ընդունում է հետե-
վյալ բովանդակությամբ մի դեպեչ: «Զորքե-
րի հրամանատարը հրամայել է զրահագնաց-
քին անցնելու Ղամարլու, հրամանը չի կա-
տարված»:

— Յես հրամանատարն եմ ապստամբած
զրահապատ գնացքի, ձեր հրամանները չեմ
կատարում: Շուտով կլինեմ Յերևանում» —
պատասխանում է այդտեղ կանգնած միջակ
հասակով, թխադեմ թափանցիկ հայացքով
մի զինվորական:

Դա Մուռայելյանն էր, ապստամբների
ուսգմական ղեկավարը:

Մթնշաղում հազիվ տեսանելի գծադրվում
է զրահապատ գնացքը: Առավել մտավախու-
թյուն են աղղում կատաղի թնդանոթները:

Այդ որը զորանց մի շուռ գալուց փախան
ու ցիր ու ցան յեղան տարբեր կարգի խտնութ-
պանների և առևտրականների մի խումբ, վո-

րոնք յեկել եյին խելքի բերելու «Վարդան Զորավար» զրահապատ գնացքի զինվորական կազմին:

Պահակի ձայն տալուց ու հարցումից հետո, մեզ տանում են փայլուն լուսավորված կուպե: Ապստամբութեան ղեկավարները բոլորն այստեղ են: Ընկերաբար իրար ձեռք ենք սեղմում — ահա զինվորական բարեկամական նըշանը: Յերկու յերեք խոսքով վորոշված է առաքիտայան ձեռք ձգելու կենտրոնական հիմնարկությունները, հեռագրատունը, փոստը և Կապաչի գիրքերը: Բոլորը ցրվում են զորամասերը: Քաղաքում աիրում է խաղաղություն:

Հեղափոխական արագընթաց տեմպով դեպքերը հաջորդում են իրար: Քաղաքը, կայսրանը, Կապաչի պոստը բոլորը գրավված են: Պահեստներին հսկող զինված պահակները թողել փախել են:

Ապստամբությունն ինչքան դնում, այնքան լայնանում է: Ղարսում, Սարիղամիշում, Բայազետում կազմակերպված են Հեղափոխական կոմիտեներ:

Խառնայանի կառավարությունն ընկնում է: Հույս չունենալով կանոնավոր զորամասերի վրա, կառավարությունը կազմում է խլամբեր:

Ապստամբությունն ինչպես մի հրավա-

ռություն հեղեղի նման առաջ է շարժվում: Շարժման կենտրոնն էր Ալեքսանդրոպոլը, իսկ ռազմական շտապը՝ զրահապատ գնացքը՝ «Վարդան Զորավար»:

Կառավարական խախուռ ապարատները չկարողանալով դիմանալ հեղափոխության ծանրությանը, — սկսեցին անձնատուր լինել: Ինքը կառավարությունը տատանվում էր պաշարման դիմելու ու դենքի ուժ գործադրելու մեջ: Վերջապես վերջինիս կողմնակիցները հաղթանակում են ու Ալեքսանդրապոլի դեմ ուղարկում կառավարութեան հենարան դաշնակցական խմբեր:

Ռեակցիան ջղածգորեն և լարվածությամբ սեղմել էր իր թաթը:

Արդյոք նա ուժ կունենար լիկվիդացիայի յենթարկելու Ալեքսանդրապոլի ապստամբությունը:

Դա կարող էր վճռել միայն մայիսի 14-ի ճակատամարտը, «Կապաչի պոստի» մոտերքում և հաղթանակը կտաներ նա, ով կունենար թե բարոյական և թե անտեսական ուժերի դեռակշռություն: Արդյոք կհաջողվեր Ալեքսանդրապոլի զորամասին չափավորել հարվածներն ու ոգտազործել իր տակտիքական հաջողությունները:

Լինելով ապստամբութեան մարտական ղեկավարներից մեկը, — յես պնդում եյի, վոր

այդ ժամանակ Ղարսի անհաջողութիւնից հետո թեև կռիւ բռնւիւ Ալեքսանդրի մոտ համարձակ քայլ կլինեն, բայց ամբողջ կազմով նահանջելով դեպի Ղարաքիլիսա և գրավելով Դիլիջանը (այդ կայազորում դաշնակիների զորքերի մեջ քայքայում եր նկատւում) և այնտեղից առաջ խաղալով մի կողմից դեպի Յերեւան Ախտայի վրայով և մյուս կողմից դեպի Ալեքսանդրապոլ Համամլու—Ջաջուրի վրայով, վոչ միայն հնարավոր եր, այլև խոստանում եր կատարյալ հաջողութիւն:

Հիշյալ հայացքն ու մտադրութիւնը արտահայտւած եր իմ կողմից Մայիսի 12-ի յեբեկոյան ժամը 6-ին, վազոնում, վորտեղ տեղավորւում եր Հեղկոմը: Ընկ. Մուսայելյանը համաձայնվեց իմ առաջարկի հետ: Վորոշված եր նահանջել դեպի հետ: Բայց վեց ժամ հետո զորամասի շտապում (Կաղաչի պոստ) ստանում եմ մի գրութիւն, վորոշումը փոխելու մասին: Անմիջապէս մարտական հրաման եմ գրում հետևակ և հրետային զորքերին առավտոր գրավելու/Բայանդուր կայաքանի դիրքերը: Հեծելազորը պահեստի զորք պիտի կազմեր, մնալով Կաղաչի պոստում:

Այդ մեծ հարցի առթիւ կայացած վորոշման փոփոխումը տատանում եր առաջ բերել միջակ հրամկազմի մեջ, չհամարտալու վոր դեկավարները կարող են ունենալ ընդունակու-

թիւն սկսած գործը ղենքը ձեռքին տանելու մինչև հաղթանակ:

Թշնամու աղետներն ոգտվեցին հանգամանքից ու ստեղծված հոգեբանական դրութիւնից: Այդ ժամանակից եր, վոր քանի գրեւում շարժումը կորցնում եր իր ուժը: Այդ հիշատակելի որերում թեև մի քանի հոգիցույց տվին ուժ, կորով համարձակութիւն և ուշիմութիւն, բայց որչեկտիվորեն սկսած մայիսյան ապստամբութիւնը չունեւ ախպիսի առաջնորդ, վորն ընդունակութիւն ունենար այդքան արագութեամբ ստեղծված քաղաքական բարեհաջող պայմաններում ստեղծել հաղթանակի իսկական ճանապարհը:

Յեթե գտնվեր այդ որերին նման որինակ մի անհատ— Խորհրդային իշխանութեան պատմութիւնն ուրիշ ընթացք կատանար:

Բայց չնայած արտաքին անհաջողութեան՝ անմիջականորեն ձեռք բերելու իշխանութիւնը, մայիսյան ապստամբութիւնը մեծ դեր խաղաց Հայաստանի աշխատավորութեան ազատագրման գործում:

Մայիսյան դեպքերը բաժանեցին բանակը կառավարութիւնից/հանցնելով դաշնակցական կառավարութեանը մի խոր և անբուժելի վերք: Բարձր հրամանատարութեան ու կառավարութեան կողմից մեծ սխալ եր՝ սկսել այդ բանակով ն. տ. հոկտեմբերի պատերազ-

մը, այն բանակով, Վորը մայիսին ապստամբել
էր իր դեմ:

Տխրագին հետեանքները չուշացան հաս-
տատելու այդ:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԶՐԱՅԱՊԱՅ ԳՆԱՑԲԸ

Փետրվարի վերջում, ձմռան ցուրտ ժա-
մանակ գունդը տեղափոխված էր Ղարսի շըր-
ջանը: Անցնում են Զարուշատի արշավախում-
բը, բոցավառվող գյուղերի պատկերը, ձյու-
նով ծածկված ճանապարհների վրա գլուխը
կորցրած անտուն բնակչություն և այս ամենի
վրա իշխող անպատկառ թալանը, վորպես
գործողությունների ազդակ, — ահա այդ ար-
շավախմբի ուրվադժերը:

Յեւ այս առաջին ու վերջին անգամը չե:
Սա սխտեմ է, մեթող է:

«Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման»:

Հրամաններն առանց առարկության կա-
տարելու հին ռազմական սովորույթն սկսում
է յենթարկել հսկայական փորձության և գըր-
թում ձեռակերպվում էր մի վճիռ՝ այսպես շա-
բուհակել չի կարելի:

Միաժամանակ մի ինչ վոր բան հասու-
նանում էր գորանոցի խորքում, անդլիական
համազգեստ հագած գյուղացիական մասսայի
խորքերում, շարժել էր սկսում իր տըր-
մադրությունները, իր կարծիքները:

Պատերազմն առանձին դժվարությամբ
իր թաթն էր դրել Ալեքսանդրապոլի վրա, այդ
քաղաքի տեսքը կենդանի բողոք էր պատե-
րագմի դեմ: Առանց այն ել մռայլ, ամբող-
ջապես դորշ քարից նա իսպառ սեւացել էր կրա-
կում: Կիսավեր լուսամուտների և դռների
փոխարեն սե խոռոչներով շենքերն ողակում
էին նրանց մեջ սպիտակին տվող կայարանն
ու առաջին դժի վրա մեկնելու պատրաստ՝
կաթնադույն պողպատե «Ազատամարտ» զրա-
հապատը — ապստամբության մարտական
կենտրոնը:

Հեռագրատանն ապարատի մոտ կանգնել
էր ամբակազմ մի աղամարդ յերթական հա-
մազգեստով: Նա ասում է.

«Յեւ «Ազատամարտի» հրամատարն եմ.
ի՞նչ է պետք»:

— Զորքերի հրամատարը հրամայել էր
Ձեզ մեկնել Ղամարլու, ինչու մինչև այժմ
դուք Ալեքսանդրապոլումն եք:

— Յեւ ապստամբած զորամասի հրամա-
տարն եմ և հրամանները չեմ կատարում, հա-
ղորդեցեք զորքերի հրամատարին:

Այդ որն «Ազատամարտի» վրա ծածան-
վեց կարմիր դրոշը, իսկ նրա ներսում կենտ-
րոնանում էին շարժման ղեկավարության
բոլոր թելերը. նրա ջահի պես այրվող հրա-

մատարն իր ձեռքն եւ առել մաքրական ղեկա-
վարութեան գործը:

1920 թ. մայիսի 1-ին Ալեքսանդրապոլ
կայարանի յերկաթուղային դեպոյի բանվոր-
ները միախնդի հավաքվեցին:

Այդ պարզ, արևոտ ուրը քաղաքի ծայրա-
մասերում չքավոր ժողովրդի միջև կենդանու-
թյուն եր տիրում: Հայտնի չե թե ինչ հեռա-
գրաթերթով լուրեր են հասնում Կարմիր բա-
նակի Անդրկովկաս շարժվելու մասին, Բազմի
տնկման, Ադրբեջանում խորհրդային իշխա-
նություն հաստատվելու մասին:

Ամբոխը հավաքվում եւ հապճեպ կերպով
պատրաստված ամբիոնի շուրջը. այնտեղ բո-
պե առ բոպե փոխվում են ճառախոսները:

Հեծրրիգադի ռազմական դաշտում յերե-
վում եյին բանվորները: Զորանոցից դուրս
յեկածները խառնվում են քաղաքից նոր յե-
կածների հետ եւ այստեղ առաջին անգամ վրձ-
նական ձևով խոսում դաշնակցական կառա-
վարութեան տապալման մասին:

Մայիսի 8-ը:

№ 62 սալոն վագոնի յերկայնաձև կենտ-
րոնական կուպեյում վառ լուսավորություն
եւ սեղանի շուրջն են հավաքվել Հեղկոմի ան-
գամները, կայազորի ավագ հրամկազմը:

Սովորական տաս տարիներն իրենց դրա-
կանութեամբ չեն փոխարինում այդ յուրա-

տեսակ քաղժամը վերահաս անցքերի պարա-
դայում: Յերկու խոսքով մերկացված ու բա-
ցատրված եւ կոնյունկտուրան համաշխարհա-
յին անցքերի լույսի տակ:

Այնուհետև որվա խնդիրները Հայաս-
տանի շրջանակներում, իշխանութեան դրա-
վումը գենքով, «խմբերի» արտաքսումը, խոր-
հրդային իշխանութեան հաստատելը եւ Կար-
միր Բանակի շինարարությունը:

Ահա ուղեձողները:

— Կամենով եք մեզ հետ—գնանք:

— Վո՞չ—դուք ազատ եք:

Հիշում եմ իր կաշվի համար առանձնա-
պես դողացողներից մեկը հարց տվեց. «Իսկ
յեթե մենք չմիանանք, դուք յերաշխավորո՞ւմ
եք մեր ապահովությունը»:

— Մենք Ձեզ ձեռք չենք տա, նույնիսկ
համաձայն ենք Թիֆլիս մեկնողներին վագոն
տալը,—յեղով պատասխանը եւ ապա. «Յեթե
Ձեզանից մեկն ու մեկն իշխանութեան դրա-
վումից հետո կցանկանա ծառայել, մենք այ-
նուամենայնիվ, կընդունենք»,—ավելացնում
ե Մուսայելյանը:

Ստիպողականութեան տարրը բացակա-
յում եր: Մեծամասնությունն անցավ Կարմիր
զորքերի կազմակերպված ջոկատը, վորը
կենտրոնանում եր «Կազաչի պոստում»: Մինչ-
դեռ մուսավաթիստների անկման, Ալեքսան-

գրապոլի, Ղարսի, Սարիղամիշի և Նոր Բա-
յազետի անցքերի առթիւ առաջին պահուն
խուճապի մատնված ռեակցիան անհեղինակ
վոր չեն գրոհում իր միջնաբերդէ վրա, ուշքի
յե գալիս, կաղմակերպվում ե:

Յերեւանի կայծակնակերպ գրաւումը, վոր
հաղթանակ եր խոստանում, ձեռքից բաց եր
թողնված և Ալեքսանդրապոլի մոտ տեղում
մնալու յուրաքանչյուր որվա հետ ընկնում ե-
յին հաջողութեան շանսերը:

Հակառակորդի սկզբնական չիտթությու-
նը փոխվեց ձեռքից սողացող իշխանությունը
պահելու բուն ձգտումով: Ինչպիսի կողեր-
ներ, մի կողմից խմբերը, վրացական մենչե-
վիկները, չարչիների համակրանքն ու մյուս
կողմից Ալեքսանդրապոլի Հեզկումի մարզասի-
րությունը:

Չղաճկային ջանքեր, և Ալեքսանդրապոլի
մոտ շարժվում ե ջոկատը:

Հասնում ե մայիսի 9-ը:

Մենք կանգ ենք առել տեղում, հակառա-
կորդը պատրաստվում ե հարձակման:

Մայիսի 10-ը. մենք շարունակում ենք
կանգնած մնալ: Սխալմունք—հակառակորդը
մեկնում ե:

Մայիսի 11-ը. հակառակորդը շարժվում
ե. մենք կանգնած ենք: «Կազաչի Պոստի» կա-
յազորի շարքերը տատանվում են, աննկատե-

լիորեն անվստահություն ե առաջանում գեպի
իրենց ուժերը:

Միայն 12 որ ե անցել մայիսի 1-ից, բայց
ջոկատի տրամադրությունը տարբեր ե, ինչ-
պես յերկինքը յերկրից: Կամքը գեպի հաղ-
թանակը կոտրված ե:

Մայիսի 14-ը. անհանգիստ գիշեր, մենք
միմյանցից թնդանոթի ձիգի հեռավորութեան
վրա յենք գտնվում, լուսաբացին ընդհարումն
անխուսափելի յե:

Չրահապատի հետ կապ չունենք. ջոկա-
տում անհանգստություն ե տիրում:

Գիշերվա կեսին ստանում եմ «լակոնա-
կան» անհատկանալի պատուիր:

«Չորամասերը զորանոց տարեք»:

Վոչ ժամ, վոչ պատվերի առաքման վայր,
վոչ նպատակ:

Ձիերը թամբելու պատվերը կանխված ե
հայտնի չե թե ում կողմից. մի ակնթարթում
մարդիկ ձիերի վրա յեն և եսկազրոնների սե
ժապավենները լուսաբացի մշուշում ձգվում
են գեպի Արփաչայը: Յերկաթուղագծի մոտ
ձիերը վախենալով փոնչացնում են չոզեկաթ-
ոսյի բոսորագույն կրակից, չոզեկաթոսայի
յեանից միայն մի զրահապատ գնացքի տա-
մալ ե կպած:

Տամալից Գասպար Յեվանդուլյանը կոա-

ցած հաղորդում ե անմխիթար տեղեկու-
թյուններ.—

«Յեկա նախազգուշացնելու»: Նա կատա-
րեց իր պարտքն ընկերների հանդեպ, վառնդի
յենթարկելով կյանքը, և դրա համար արժա-
նացավ յերկար ամիսներ բանտի:

Լուսացավ: Ծագող արեգակը վոսկեղոծեց
Ալեքսանդրապոլի հին բերդի ատամնավոր
պարիսպները: Յես յետ նայեցի վարժական
եսկադրոնի ծանոթ դեմքերին, առջևից Բաղ-
չինյանն ու Բաղրամյանն են: Հարկավոր եր
չտապել, ով չեր ցանկանում դերի ընկնել,
պետք ե անցնել Ղարախաչից Հայաստանի
սահմանների մյուս կողմը: Մենք արագ վա-
պելով անցանք մեր զորանոցների մոտով,
ձախից ծայրի շենքի կտրանը վազվզեցին ինչ
վոր դեմքեր, գնդացրային փականքի չոր չըխ-
չըխկոց, և մեր վրա ճարճատեց «Մաքսիմի»
ժապավենը: Դիպուկ չեր կրակը, միայն մի
հողի թեթև վիրավորվեց ձեռքի թաթից, մը-
նացածն արագացնելով քայլերը, հեռա-
նում են:

Շուտով նախընթաց գործողությունների
թափերաբեմը՝ բոլորված Զաջուռի և Ալագ-
յազի լեռների կապույտով, մնաց հեռու մեր
յետևում:



12.545